տայաք գրամ և տուաք Գ՚ զուռուշ և նա գնաց թէ Առնեմ. և մի երկու օր եկաց և զայն տեսաք՝ որ ելաւ եւ խղճմտանս անկեալ էր թէ Զեմ առներ, Ռ զուռուշ կու տաք՝ նա՛ կ՚առնեմ. և մեք տալու եղանք Լ՚Ճ զուռուշ եւ չարաւ զգործն եւ մնաց: Եւ տեսաք զկախարդութիւնն, որ ունէր մի թապութ ի չափ Բ թզի ափի և ի մէջն լեարդ և ճիկար և մի սապոն, և ի լեարդն զարկած էր հազար և մի անծակ ասեղ, և նա կարդայր վասն Եղիազար վարդապետին՝ թէ մինչ ի Ա օրն մեռանի: Եւ ի հետ էաք որ գրել տվին զհիւանդէթն թէ Երբեմն տանիկ լեալ է և այժմ եկեալ մեզ վարդապետ եղեալ է: Զայսոսիկ վկայեցին առաջի իշխանացն Զ եկեղեցոյ և աթոռակալացն, որ այսպիսի չարութիւն է գործեալ այս Մուղնեցի Յովանէս վարդապետն վասն նախանձու առ Եղիազար վարդապետն: Եւ առեալ տրակ ողջունի առ Յակոբ կաթողիկոսն եւ ծանուցում առնել զբանքս և զգործս սորա, և յառաջն ուղարկել Աստուածատուր վարդապետին որ նա ևս կնքէ և վկայութիւն տայ բանիցս: Եւ երեկոյիս որ Ուրբաթ լուսանայր՝ մի Զոզացի թէ Ագուլցի, ոչ գիտեմ, կու սպանվի ի ձեռաց մի հայոյ հացածախի. քանզի այս Արևելեան Հայքն որ ի տեղս լցվան, բազում աւեր և խառնակութիւն եղև ի մէջ քաղաքիս և բոլոր Հոռոմաց տանն (Ռէրէ):

Երեկոյիս որ Շաբաթ լուսանայր (19 Ապրէլ) Սուրբ Նիկողոսու Տէր Պետրոսն Պուլպուլճի վաղջանեցաւ. և առաւօտուս գնացի ի ժամ և զԹադէոս[1]) վարդապետն տարան որ օծեց զվաղջանեալն, քանզի Եղիազար վարդապետն ոչ է եկեալ: Եւ ես ի Մղտեսոնցն գնացի և զհացն ի հոն կերայ և անտի ելեալ ի խանութ գնացի եւ երեկոյիս գնացի ի Սուրբ Նիկողոս եւ կացաք

1) Թաթէոս.